ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-------- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

2-ՐԴ ԿԱՐԳԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՕՊԵՐԱՏՈՐ ԴՄԻՏՐԻ ԶԱԽԱՐՈՎԻՆ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՌԱԴԻՈՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «զ» ենթակետը, 21-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 26-ի №527Ն որոշումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ռադիոսպորտի ֆեդերացիայի 2022 թվականի օգոստոսի 9-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել 2-րդ կարգի սիրողական ռադիոօպերատոր Դմիտրի Զախարովի հայտը և տրամադրել սիրողական ռադիոօպերատորներին հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործման թույլտվություն՝ մեկ տարի գործողության ժամկետով:
2. 2-րդ կարգի սիրողական ռադիոօպերատոր Դմիտրի Զախարովին թույլատրել օգտագործելու EK/RX3DPK ազդականշը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի ---ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
------ 2022 թ.